

Նոյնպէս մարդ Աստուծոյ ծարաւի է և Անոր կարառը կը քաշէ , քանզի իրեն համար բնականոն ապրելակերպը այս ծարաւը գոհացնելու մէջ կը կայանայ:

Դարձեալ մարդ Աստուծոյ ծարաւի է անոր համար որ կրօնքը արտաքին ձեւակերպութիւն մը ըլլուէ աւելի Աստուծոյ հետ ապրուած կեանք մըն է :

Եթէ մէկը սկսի ապրիլ այս կեանքը , Յիսուսի աշխարհ բերած ճախ կեանքը , որքան խորանայ անոր մէջ , այնքան իր ծարաւը կ'աւելնայ առ Աստուծած և կը ստիպուի Անոր աւելի մօտ ըլլու : Դաւելթ ուրիշ անդ մը կ'ըսէ . «Ո՛վ Աստուծած , Դուն իս Աստուծածս , ես առտուանց Քեզ կը փնտուեմ , չողիս Քեզի ծարաւի է» : «Զեռքերս գէզի Քեզ կ'երկնցնեմ . իմ անձս չոր երկրի պէս Քեզի կը ծարաւիս :

Եսային կ'ըսէ . «Ո՛վ բոլոր ծարաւածներ , ջուրերուն եկէ՞ք , և ստակ չունեցողներ , եկէ՞ք և ծախսու առէք» (Ես . ԾԵ . 1) :

Իսկ Յիսուս , հրէից մեծ տօնին զերջին օրը , ժողովուրդին ուղղելով իր խօսքը ըստու . «Եթէ մէկը ծարաւի է , թո՛ղ ինձի գայ ու խմէ . այն որ ինձի կը հաւատայ , ինչպէս գիրքը կ'ըսէ , անոր ներսէն կենացանի ջուրի գիտակներ պիտի բղիքին» : «Ո՛վէկը որ կը խմէ այն ջուրէն՝ զօր ես կուտամ , անիկա յաւիտեան պիտի չծարաւի» :

Յիսուս Քրիստոս , մեր Փրկիչը . այս կենաց ջուրին ակնազբիւրն է : Այն որ Անկէ կը խմէ , բնաւ չի ծարաւիր :

Ֆեկնօ , Գալիք .

ԳՄ . Ա . ԱՍՏՐԱՖԵԱՆ



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՉԵՌԱԳԻՑ

#### ԵՐԿՈՒ ԱԽԵՏԱՐԱՆՆԵՐ

•

Աղեքսանդրիոյ Ս Պօղոս Պետրոս եկեղեցին ունի երկու Զեռագիր Աւետարաններ : Առաջինը , կաչեկողմէ , լաւ վիճակի մէջ , երկուին , 27 × 18 սանդ . մեծութեամբ : Գրին առջել և ետել երկուական թերթ աւելցուած են իրեն պահպանակ , որոնք գրուած են հին երկաթազրով : Աւետարանը իջաթիւեր չունի : Առջել զետեղուած երկու էջ բացատրազրէն ետք , չորս էջ պարագ ձգուած է : Եւրաքանչեւր Աւետարանի սկիզբը գրուած է Աւետարանիցին նկարը , յետոյ կիսախորան և ապա բազմաթիւ զարգանչաններ :

Գրքին ետել զրուած Յիշատակարանին մէջ կը կարգանք որ այս Աւետարանը գրուած է Երուսաղէմի մէջ , զրիչը միենայն ատեն ծալկողը եղած է : Երկուին Յիշատակարանը կ'արտազրենք նոյնութեամբ . —

«Փառք ամենասր . երրորդութեան եւ մի Ամֆութեան այժմ և միշտ ե յաւ : Քանզի գրեցաւ սա ի Ամֆակոս սր . քաղաքս յերուաղէմ : Բնդ հովանեաւ ամ . սր . տնաւըինականացս Քի . Ամֆակոյ : Զեռամբ նուաստ ծառայի ծառայիցն այ . բազմամեղ և անպիտան գրչի որ ամաչեմ կոչիլ ի բարձրագոյն անուանէն եաս . զի ի գատապարտութիւն է ինձ անունու այս . այլ լոկ անուամբ կոչիմ Հայրապետ : Եւ ես անպիտան և անարհեաս գծաւզո , սկիզբն արարի այսմ լուսաիզ և կենսակիր ած . աւանդ սր . կտակիսի ստոյզ և յընտիր աւրինակէ : Եւ ըստ կարի իմում գծագրեցի զսա ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ : Եւ առ ի յիշատակ հարեւոր և համեստ , և աղաւթարար մահգատի իկտիչ ապաշխարովին որ կայր ի քաղաքս երսղմ . ի վանս սրբոյն Յակոբայ . և աղաւթէր յամ . սր . տնաւըինականան Քի . ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց յիշատակ իւրն և ծնաւղացն իւրոց և ամ . արեան մերձաւորացն , հաւըն իւրոյ յոհա-

նիսին և մաւրն իւրոյ մուղալիսաթունին. մուղտոփի խաչերեսին և հաւըն իւրոյ ամիբրասոլանին և մաւրն իւրոյ մեծխաթունին. խութլուքին և եղբարցն իւրոց էտկարին, սինանին, և յոհանիսին և ալլ ում. արեան մերձաւորացն իւրոց և երախտաւորացն ամէն: Գարձեալ կրկին յիշեցէք ի Քս. ի վերոյ գրեալո ի սր. աւետարանս զհոգեոր մայրերն իմ իկանին և զմեծխաթունին և զհոգեոր եղբարցն իմ զպրոն. խաչերեսին. Եւ գարձեալ կրկնակի ես անպատճ և մեջաւոր ծառայո իկանիչ. յրեանկեալ աղա-

չերեսն և զմայրն իւր զմեծխաթունին որ կամակից եղեն և աւգնական աւետարանիս առնելոյ: Գրեցաւ սր. աւետարանս ի Ածակոյս մայրաքաղաքո Երազմ. ի վանս որ կոչի Փրկիչ և ի մէջ հրեշտակակրաւն կրաւնաւորացու: Ի թըւականիս Հայոց Զժկ., ի կաթողիկոսութեան Տն. կարպտի. կիլիկեցոյ և ամ. Հայոց: Արդ աղաչեմ զամենսկան սր. աւետարանիս յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթո ձեր, զիկտիչ մղտոսի, որ ստացաւ զստ ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւզաց իւրոց և ամ. արեան մերձաւորաց ամէն: Ընդ նմին և զամպիտան ծառայո զհայրպտ. զզրաւզ սր.



Ս. Մաքենո Աւետարանիչ, Մանրանկար 1462 թուականէն



Կիսախորան Եւ Զարդանկար, 1462 թուականէն

չեմ զքահանայսոգ որ եկեղեցւոյ որք հանզիպիք սր. աւետարանիս կարգալոզ կամ աւրինակելով յիշեսչիք ի յերկնաթուիչ յաղաւթո ձեր զմեղաւոր ծառայքս զիկտիչն, զմեծխաթունին և զխաչերեսն, որ ետու զսր. աւետարանս գրել եռափափաք սրտիւ յիշատակ ինձ և ծնաւզաց իմոց, և ամ. արեան մերձաւորացն և Քս.ի փառք յաւ է իւրեանս: Յիշեցէք ի Քս. զմուղատոփի խա-

աւետարանիս և զծաղկող յիշման արժանի առնէք: Այլև զթղթի կողող և զկագմող սր. աւետարանիս զառաքել զկուսակրաւն և զգնաւոր սր. արեղայն յիշման արժանի արարէք և զուք յիշեալ լիջիք ի յաներեկ աւուրն որում բանք սպասին և գործք թագաւորին և նմա փառք յաւիտեանս ամէն: Այլև ծանուցումն լինի մեր հոգեոր մաւրն իկանիչ մղտոսին և մղտոսի խաչերեսին և իւր

մաւրն մղտսի խասխաթունին, քանզի չառսէք թէ վարդապետն չատ զրամ էտա իշմնէ, հեսի ի ձեր հարկէցգ, այ. հրաժանքն զրած է ի որ. աւետարանդ թէ զանձեցէք ձեզ զանձա յերկինս որ ոչ ցեց ուտէ և ոչ ուտիչ ապականէ, այս աւետարանս այն զանձն է, զարձեալ նման է արքայութին, երկնից տոն վաճառականի որ գտանէ պատուական մարգարիտ մի, վաճառէ զամենայն ինչս որ ունի և գնէ զմազարիսն զայն, այս աւետարանս այն մարզարիսն է: Դարձեալ նման է արքայութի, երկնից զանձի ձածկելոյ յազարակի, զօր գտեալ մարգոյ թաքուց և ի ինզութենէ անտի, երթայ վաճառէ զամ. ինչ զոր ունի և գնէ զազարին զայն, ազարակն աշխարհու է, այն զանձն որ. աւետարանս է որ որստիւ և հաստատուն յօւսով զնեցիք ձեր հալալ վաստակաւք ձեր հոգոյ տուաջնորդն և ձեր հոգոյ փրկութիւն որ. աւետարանս է որ տանի զձեզ ի կեանսն յաւիտենից. հոգեոր մայրն իմ նկալչ որ խոստացար զպրաւնէ առուելիքն և յօւզարկեցիր խիստ մերկ էի և աղքատ, մեզիկ ձածկոլիթ որտարոք, արարիչն Ած զքո հոգիկ զարդարէ լուսեղէն պատմուճանաւն ի հանգերձեալ կեանսն ամէն: Ազտիւ Ք. ստուրն որ չատ աշխատեցաւ և զաւետարանդ բերի ձեզ. արարիչն Ած իւրն գարձահատուց լինի զերանաւէտ ձայնն լոէ ինքն և իւր ննջեցւալքն ամէն:

Այս ձեռագրին Յիշատակարանին հաճածայն, «զրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիւ Հայոց Զժիկ» որ հաւասար է 1462 Փրկչական թուականին:

Երկրորդ ձեռագիր Աւետարանը, վայտեայ և վրան կաշեպատ կողք մը ունի, երկսիւն է և նախորդին նման մագաղաթ, աղնիւ և ընտիր տեսակէ: Դժբախտաբար, առաջինին չափ լու վիճակի մէջ չի զըսնըւիր, թէն զրութեան թուականը առաջինէն աւելի զերջ տեղի ունեցած է: Մեծութիւնն է 25×18 սանթիմ: Ակիզրը ունի եօթը պարագ թերթեր և երկու թերթ ալ պակսած է: Մատթէոսի Աւետարանին սկիզբը տասը ցանկեր և բացատրագրեր զետեղուած են, որոնց իւրաքանչիւրէն ետք երկուական երես պարագ ձգուած է: Իւրաքանչիւր Աւետարանին սկիզբը զրուած է

Աւետարանիչին նկարը, իսկ զանազան եւ թեսներուն վրայ բազմաթիւ և գեղեցիկ Հայկական զարդարուեստին նշաններ, ինը բաններէն և Կիսախորաններէն զատ:

Մարկոսի Աւետարանին ետեւը չատ վոգր Յիշատակարան մը՝ կայ հետեւեալ տողերով: ուն զմեղաւոր Մարգարէ երէցո յիշեայ ի թա, և Ած զձեզ յիշէ: ամէն:

Դուկասու Աւետարանին ետեւը զրուած է նոյն մերանով և նոյն զիրերով Ալե Հայ-



Ա. Մաքրես Աւետարանիչ

կական թուականը որ ձեռագրին գրութեան թուականը չփոթեցուցիչ կը զարձնէ, վասն զի Ալե (1035 առաւել 551 հաւասար 1586) չի համապատասխաներ զրքին ետեւը զրուած Յիշատակարանին թուականին որ է ԱծՂ. (\*) (1190 առաւել 551 հաւասար 1741): Զեսազիր մատիաններուն մէջ յաճախ պատահ-

(\*) նկատելի է որ այս ԱծՂ. թուականը Աւետարանի ոչ թէ գրութեան թուականն է, այլ, ինչպէս ստորե զրուած Յիշատակարանէն կ'երի, «պակասութիւնն» լրանալու թուականն է: ինչ որ կ'ենթազրէ որ Ալեին զրուած Աւետարանը կ'ամ պակասաւոր մնացած է և կ'ամ անկէ թերթեր ինկած են, ինչ որ ամբողջացած է 1741 ին ԽՄԲ.

առօգ առեղծուածներէն մէկը կրնայ սեպ. ուիլ այս պարագան։ Բայց զարդանշաններու և մանրանկարներու արուեստին մանրաման քննութենէն այնպէս յայտնի կ'ըլլայ որ աւելի 18րդ դարու զրութիւն է քան թէ 16րդ դարու . որովհետեւ արզիական բացատրութեամբ սպառուապատ կամ դաստիան ազգեցութիւն մը կը կրեն մանրանկարները և գէմքերուն արտայատութիւնները այնպէս ենթազրել կուտան թէ ձաղկողը Եւրոպական ազգեցութիւն կրած է զօրաւոր կերպով։



Հայկական Զարդանկար Խորան

Կ'արտազրենք ձեռազրին ետել զրուած Ցիշտակարանը նոյնութեամբ։

Ա Այս աւետարանիս պակասութիւնքն լրնեցաւ . համարաբբառքն և խորանքն ձեռամբ սերաստացի տիրացու բարսեղին և տիրացու յակորին, և արդեալք տիրացու ներսէսին . որք տեսանէք տուք զողորմին մեզ և ծնողաց մերոց . և գուք լիշեալ լիշեք Այ, Ամէն, Թօ՛Շ։»

ԶԱԻԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Աղեքաններիս

## ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Բ) — «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

Այսպիսի հոգեկան ծանր զրութիւնների մէջ բանաստեղծին մնում է մեղայ տոկով թիթեացնել յուսահատութեան ծանրութիւնը . և առնենեալու է համարում իր Աղբերգութեան Մատեան»ի սմեղային հատուածները . որոնք նրա կարծիքով կարող են սրտերին յոյսեր ներշնչել Այսպէս է խորհրդածում Նարեկացին, և կարծէք թէ ինքը զրանից հոգեպէս թիթեանում է ու հանգստանում . Բայց աւելի մեծ յուսագրութիւն և անզորրութիւն է նրան պատճառում Քրիստոսը . որը . ըստ հեղինակի . առհասարակ ողորմում է բոլոր նրանց . որոնք բաց արձակապէս իրենց փրրկութեան յոյսը զնում են նրա վրայ . Առաջի բանաստեղծը զիմում է Քրիստոսին, որ սա պէնազէն խաչի սուսերով կտրի իրեն չորս կողմից մահացու կերպով պաշարող վարժի ցանցը . իր անձին զիւր ու անզորր տայ և վերագարձնի հոգու այն մաքուր անարատութիւնը . որ ինքն ունեցել է նոր սուսեղծուած ժամանակ։

Բայց . այնուամենայնիւ . բանաստեղծին սկսում է համակել մի սոսկալի տազնապ . Այս անզամ նա շտապում է . Ակում է արագ-արագ ներբոզել Աստծուն և Քրիստոսին և աղաչանքներով հեղեղել . սակայն ի զուրք . մօտենում է վերջապէս հանգուցալուծումը . Ահա՞ նրա աչքի տռաջ է զալիս իր հնարաւոր մահուան սոսկալի ուրուականը . Հիմա հս . «ամբարիչոնների զըլիսաւորս , տում է նա , ամահուան մըուըլ փոխեցի»։

«Աղբերգութեան Մատեան»ի բանաստեղծական ամենացնցող տեղերից է այն , ուր Նարեկացին իրեն՝ որպէս մեռածի քստմիցցուցիչ պատկերն է գծում .

Յորժամ , որ այժմ բանապանոյն խրոխաւ Սիզացոյ բարձրապարանոց , [ձայն Անկեալ զնիմ դի անկենդան , Կարկեալ ի խօսից , կուսկանդեալ ձեռօֆ , Լեւլ անդամօֆ , խիւեալ ըրբամբ , Կափուցեալ աչօֆ , տախտակ անշարժուն , Կոնդ կիսոյրեաց , արձան անզզայ ,